ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Վ. ՋԻԼԱՎՅԱՆ

«22» 06 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000049

Ձեռնարկողը՝ ***«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ***
Ք. Երևան, Շիրակի փ., արտադրամաս 74/16

Գործունեությունը՝ ***Վանինայի ավազի հանքավայրի հյուսիս-արևմտյան տեղամասին հարող տարածքում 2020-2022թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դռնոյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000049

< 22 **>** 06 **2020թ.**

Վանինայի ավազի հանքավայրի հյուսիս-արևմտյան տեղամասին հարող տարածքում 2020-2022 թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Մլ Մայնինգ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզի Նոյակերտ համայնք

Արարատի մարզի Վանինայի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Հյուսիս-Արևմտյան տեղամասում, «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության հումքային բազայի ընդլայնման նպատակով, նախատեսվում է կատարել տեղամասին հարող տարածքի ավազակոպճային խառնուրդի կուտակի հետախուզում: Հետախուզման համար ընտրված 72,25 հա տարածքը գտնվում է Նոյակերտ համայնքի վարչական տարածքում և գտնվում է բնակավայրից 4կմ հեռավորության վրա: Համայնքի կադաստրային քարտեզում երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնականը՝ այլ նշանակության հողեր:

Նկարագրական մաս. Վանինայի ավազի հանքավայրի հյուսիս-արևմտյան տեղամասին հարակից տարածքում կատարվելիք հետախուզման աշխատանքները նպատակ ունեն պարզաբանել ավազակոպճային խառնուրդի որակական հատկանիշները, որոնք պետք է համապատասխանեն ՀՍՏ ԳՕՍՏ 8736-95 «Ավազ շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջները բավարարող վերջնարտադրանքին:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT EXPERTISE CONCLUSION 02543168

Հարավից տեղամասը սահմանափակվում է Արաքս գետով, իսկ արևմուտքից, հյուսիսից և արևելքից՝ հետևյալ կոորդինատներով (ըստ Arm WGS-84 համակարգի).

1. 4407652, 8469836
2. 4407791, 8469915
3. 4407478, 8470473
4. 4406840, 8470933
5. 4406773, 8471047
6. 4406749, 8471239
7. 4406782, 8471385
8. 4406791, 8471516
9. 4406767, 8471593
10. 4406556, 8471972
11. 4406496, 8472109
12. 4406397, 8472066
13. 4406462, 8471995
14. 4406467, 8471955
15. 4406414, 8471944

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, հետախուզական փորվածքների անցման, նմուշարկման և փորձնական արդյունահանման աշխատանքների համալիրով:

Երևակման հետախուզումը նախատեսվում է կատարել միմյանցից 120-200մ հեռավորությամբ հետախուզական պրոֆիլներով, որոնց վրա հետախուզական հորերի հեռավորությունը կազմում է 80-150մ: Ընտրված հետախուզացանցը թույլ կտա օգտակար հանածոյի հետախուզված պաշարները հաշվարկել արդյունաբերական C1 կարգով:

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով, V կարգի ամրության ապարներում:

Նախատեսվում է 43 հետախուզահորերի անցում, որոնց խորությունը՝ 2.0-2.5մ, կտրվածքը՝ 1.5մ^2:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսվում է 54գծ.մ:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից, կուտակի լրիվ հզորությամբ 20x10սմ կտրվածքով, ակոսային նմուշների միջոցով՝ ելնելով ավազներում կոպճային նյութի առկայության հնարավորությունից: Ակոսային նմուշները նախատեսվում է վերցնել հետախուզական փորվածքների պատից՝ ավազակուտակի ամբողջ հզորությամբ:

Ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար նախատեսնվում է վերցնել 43 նմուշ, 10 նմուշ՝ քիմիական անալիզների և 10 նմուշ՝ միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար:

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ СРП 68-01 սարքի միջոցով՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Տեղամասի ավազների տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրման նպատակով նախատեսվում է հետազոտվող տարածքից կատարել փորձնական հանույթ մոտ 500մ³ ծավալով՝ 2 բացահանքով: Բացահանքերից վերցված մեծածավալ տեխնոլոգիական նմուշները ջարդիչ-տեսակավորման արտադրամասում կենթարկվեն վերամշակման, որի ընթացքում կմշակվի ավազակոպճային խառնուրդի հարստացման տեխնոլոգիան, կճշտվի ԱԿԽ-ի գրանուլոմետրիական կազմը:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել երևակման ապագա շահագործման ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, ավազների ռադիոմետրիական հատկությունների պարզաբանում, որը կիրականացվի հետախուզական փորվածքների անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Դեպի Վանինայի հանքավայրին հարող տեղամաս՝ առկա են մի շարք գրունտային ճանապարհներ, ուստի նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Տեղամասի երկայնքով անցնում է նաև հանրապետական նշանակության ավտոճանապարհը:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակով հայցվող տարածքը յուրաքանչյուր տարի Արաքս գետի վարարման ժամանակ ջրածածկվում է, կատարվում է ավազի նստվածքագոյացում: Տեղամասի տարածքում չկա հողաբուսական շերտ, հետևաբար հողային ծածկույթի խախտում, բերրի հողերի վնասում չի կատարվելու: Հետախուզական փորվածքների տարածքը վերականգնվելու է բնական ճանապարհով՝ հաջորդ տարվա վարարման ընթացքում լցվելու է ավազային նյութով: Հետախուզական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում, ինչի համար շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կհատկացվի 250,0 հազ.դրամ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ հանքերևակման տարածքում գրունտային ջրերի հորիզոնները բացակայում են: Արաքս գետի վարարման շրջանում երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքներ չեն իրականացվելու:

Համաձայն նախնական գնահատման հայտի, նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա: Երևակման տարածքում չեն դիտարկվել կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրավայրեր, որջեր, բներ:

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները և մշտադիտարկումները.

- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար: Ուտիլիզացիայի պայմանագիրը կկնքվի ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի կուտակում 35լ տարողությամբ տոպրակների մեջ և տեղափոխում Արարատ քաղաքային համայնքի աղբամաններ՝ համաձայն նախորոք կնքված պայմանագրի,
- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի (ծխագազերի ֆիլտրներ) տեղադրում,
- տեղամասում տիպային երկաթբետոնե սալիկների տեղադրում՝ էքսկավատորի տեղաշարժի իրականացման ընթացքում նավթամթերքներով տարածքի աղտոտումը կանխելու համար,
- ջրապահպան գոտիների սահմանում և ապահովում,
- փոշենստեցման նպատակով ճանապարհի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին: Հետախուզահողերի և փորձնական բացահանքի տարածքում ջրցանում չի նախատեսվում, քանի որ ավազների զանգվածը գտնվում է խոնավ վիճակում անգամ տարվա չոր ամիսներին ջրերի կապիլյար բարձրացման հաշվին,
- աշխատանքների ավարտից հետո հորատիպ զուգարանի դատարկում են հատուկ ծառայության ուժերով,
- ավազի լրահետախուզման նպատակով հայցվող տարածքի բարեկարգում: Դրա նպատակով շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կհատկացվի 250,0 հազ.դրամ:

Վանինայի ավազի հանքավայրին հարող տարածքում «ՄԼ Մայնինգ» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ մակերևութային փորվածքների և փորձնական բացահանքերի անցման ժամանակ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
- նավթամթերքներով երևակման տարածքի աղտոտվածության մոնիթորինգ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,
- ջրերի պղտորության մոնիթորինգ:

Պատճառաբանական մաս. երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Նոյակերտ համայնքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են ազգային անվտանգության ծառայությունը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրակազմման, հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Փորձաքննական պահանջներ

– Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով՝ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

– Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մլ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Վանինային ավազի հանքավայրի հյուսիս-արևմտյան տեղամասին հարող տարածքում 2020-2022թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան